

3846

# ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ  
ԴՊՐԱՑ - ԵՐԱԺՇՏԱՍԻՐԱՑ

ՄԻՈՒԹԵԱՆ

S. M. DEMURJIAN

23 East 75th Street  
New York 21, N.Y.

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

ԱՄԵՐԻԿԱՅԻ



Ի ՆԻւ Եորք

1932

281.6

Հ-24

# ԿԱՆՈՆԸ ԳԻՒՅ

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ  
ԴՊՐԱՑ - ԵՐԱԺՇՏԱՍԻՐԱՑ  
ՄԻՈՒԹԵԱՆ

Փ

## ԱՆՈՒԻՆ

ՅՈՒՈՒԱՆ 1. — Միութեանս անունն է «Հայ Առաքելական Եկեղեցւոյ Դպրաց - Երաժշտասիրաց Միութիւն» :

ՅՈՒ. 2. — Միութիւնս կը գտնուի Հայ Առաքելական Եկեղեցւոյ Ս. Առաջնորդի հովանաւորութեան ներքեւ և անոր առանձին խնամքը կը վայելի :

ՅՈՒ. 3. — Միութիւնս կը բաղկանայ երկուու անդամներէ :

## ՆՊԱՏԱԿ

ՅՈՒ. 4. — Միութեանս նպատակն է օգտուիլ անհատապէս և հաւաքարար երաժշտութեան և Հայ ազգային և Եկեղեցական երգեցողութեանց ընծայած բարիքներէն :

ՅՈՒ. 5. — Զարկ տալ Հայ ազգային և Եկեղեցական երգեցողութեանց յառաջացման, տարածել ժողովրդի բոլոր խաւերուն մէջ, ինչպէս նաև ծանօթացնել օտարներուն՝ հայկական

ինքնուրոյն գեղարուեստի բոլոր առաւելութեւնները:

30Դ. 6.— Հայ նորահաս սերունդին մէջ արձաբել հայ երաժշտութեան սէրը:

30Դ. 7.— Ներկայացնել Հայ սրբազն երաժշտութիւնը իր խոկութեանը մէջ՝ աջակցելով միանգամայն Հայ եկեղեցոյ երաժշտութեան զարգացմանը:

30Դ. 8.— Կազմակերպել գործիական երաժշտութիւն:

30Դ. 9.— Միութեանս անդամներուն մէջ հաստատել եղբայրական եւ իրարօգնութեան կազմը:

30Դ. 10.— Միութեանս անդամներուն ֆիզիքական զարգացմանը ըստ կարի ոյժ տալ:

### ՄԻԶՈՅ

30Դ. 11.— Կազմակերպել համերգներ, նրանցահանդէսներ, զասախօսութիւններ, եւ գեղարուեստական ու շնորհանդարն Հայաքոյթներ:

30Դ. 12.— Կազմակերպել Օժանդակ խումբեր եւ Մասնաճիւղեր:

30Դ. 13.— Յարաբերութեան մէջ մտնել Մայր երկրի եւ Հայ զաղութիւններու նոյնանպատակ հաստատութեանց հետ:

### ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ

30Դ. 14.— Միութեանների բարկանայ (Ա.)

Գործօն, (Բ) Անչափահասո, (Գ) Պատուակալ անդամներէ:

30Դ. 15.— Գործօն անդամներն են 16 տարեկանէն վեր ամէն պարկեցա անձեր, որոնք ունին երաժշտական յարմարութիւն եւ կը ընտրը ուին Դարաց Վարիչին ու Վարչութեան հաւանութեամբը:

30Դ. 16.— Անչափահաս անդամ կը նըւկասուին 12—16 տարեկան եղողներ, որոնք կը վայելն ամէն իրաւունք բացի Քուէատուութեան:

30Դ. 17.— Պատուակալ անդամ կը նկատուին անոնք որ Միութեանս եւ կամ Հայ գեղարուեստին սատարած են եւ կը սատարեն իրենց նիւթական կամ բարոյական օժանդակութեամբը եւ կը նշանակուին Ընդհ. Ժողովին եւ կը վայելն Միութեանս յարգանքը:

30Դ. 18.— Գործօն անդամը պարտի վճարել նուազագոյն 25 սէնթ մոււրք:

30Դ. 19.— Գործօն եւ Անչափահաս անդամներ պարտաւոր են եկեղեցական արարողութեանց փորձերուն եւ ժողովներուն ներկայ գտնուիլ

30Դ. 20.— Այն անդամը որ տուանց բանաւոր պատճառի երեք անդամ յաջորդարար կը թերանայ վերոյիշեալ պարտաւորութիւններէն, Վարչութեան կողմանէ զրկուած գրաւոր աղդարաբարբէն երեք չարաթ վերջ կը կախակայուի եւ դարձեալ անհկատ թողնելու պարագա-

յին կը կորսնցնէ իր անդամակցութիւնը :

30Դ. 21. — Այն անդամը որ լիովին կը կատարէ իր պարտավականութիւնները բարոյապէս կը, վարձատրուի վարչութեան կողմանէ :

30Դ. 22. — Անդամակցութիւնը կորսնցնոլ անհատ մը Միութեան մէջ վերահասատուելու համար պէտք է դիմէ եւ ստանայ Վարչութեան հաւաճութիւնը, վճարելով նաեւ Մէկ Տոլարի տուգանք մը :

30Դ. 23. — Ամէն անդամ պարտի Միութեանը դիրքը բարձր պահել իր պարկեցա ու կարգապահ վարժունքովը եւ հնազանդիլ Կանոնադրի յօդուածներուն կէտ առ կէտ : Անսաստողները նախ կը ստանան Վարչութեան աղդարարութիւնը կրկնութեան պարագային բնդհանուր ժողովի ուշադրութեանը կը յանձնուին :

### ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

30Դ. 24. — Միութեանս ընթացիկ գործերը կը վարէ հօթը անդամներէ բազկացած Վարչութիւն մը :

30Դ. 25. — Վարչութիւնը կը բազկանայ հետևեալ պաշտօնեաններէն . (1) Ատենապետ, (2) Փոխ Ատենապետ, (3) Ատենադպիր, (4) Փոխ Ատենադպիր, (5) Գանձապահ, եւ (6) Գոյքապահ, (7) Խորհրդական :

30Դ. 26. — Պարտականութիւններ՝ (Ա) Ատենապետին պաշտօնն է, բոլոր վարչական եւ

անդամական ժողովները նիստի հրաւիրել, (ի բաց առեալ այն Ընդհանուր որոնք կանոնադիրը կը յատկացնէ Մայր Դիւանի իրաւասութեան) : Սոյն ժողովները վարել եւ տրուած որոշումներու անթերի գործադրութեանը հրակել :

(Բ) Փոխ Ատենապետը կը ստանձնէ Ատենապետին բոլոր իրաւունքները եւ պարտականութիւնները անոր բացակայութեան պարագային :

(Գ) Ատենադպիրն պաշտօնն է, ժողովներուն արձանագրութիւնները պահել ու Միութեանս բոլոր թղթակցութիւնները կատարել :

(Դ) Փոխ Ատենադպիրը կը ստանձնէ Ատենադպիրին բոլոր իրաւունքները եւ պարտականութիւնները անոր բացակայութեան պարագային :

(Ե) Գանձապահի պաշտօնն է՝ Միութեանս բոլոր հասոյթները գանձել եւ կանոնաւոր տոմարի մէջ պահել ճզզրիտ կերպով եկեւմտից բոլոր հաշիւնները: Վճարել Վարչութեան որոշմամբ ընթացիկ ծափքերը եւ ընել ուրիշ բոլոր վճարումները, որոնք կ'որոշուին Անդամական կամ Վարչական ժողովներուն կողմէ: Վճարման բոլոր չէքերը պէտք է տոորապրուին Գանձապահէին եւ Ատենապետին կողմէ: Իւրաքան-

- շիւր ամիս Գանձաղահը պարտի վարչական ժամանակակիցին ներկայացնել Միութեան նախորդ ամսուան դրամական վիճակը։ Գանձաղահը առմարները միշտ բաց են Վարչութեան ուեւէ մէկ անդամի առջեւ, կամ Վարչութեան առջեւ հաւաքաբար։ Գանձաղահը պարտի միշտ պատրաստ լլ-լալ Միութեան ներկայացնելու իր հաշիւները երբ վերջինս կը պահանջէ։ Գանձաղահի պարտականութիւնն է նաև պատրաստել տարեկան ընդհ. հաշուեկշուր, որ պիտի ներկայացուի ամալերջի ընդհ. ժողովին, առ ի վաւերացում։
- (2) Գոյքապահի պարտականութիւնն է ցուցակագրել եւ հսկել Միութեան ունեցած բոլոր դոյցերը եւ իրեղինները։
- 30Դ. 27. — Վարչութեան անդամ մը եթէ առանց բանաւոր պատճառի երեք անդամ յաջորդաբար բացակայի ժողովներէն հրաժարեալ կը նկատուի իր պաշտօնին։
- 30Դ. 28. — Վարչութիւնը թէ հաւաքաբար եւ թէ՝ անհատապէս պատասխանատու է ընդհ. ժողովին առջեւ։
- 30Դ. 29. — Վարչութեան պաշտօնավարութիւնը կը տեւէ մէկ տարի եւ անդամները վերընարելի են։
- 30Դ. 30. — Վարչական ժողովները կը դումարուին առնուաղն ամիսը անդամ մը։

## ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

30Դ. 31. — Վարչութեան պաշտօնեաները կ'ընտրուին անջատաբար, հետեւեալ կարգով։ (1) Ատենապետ, (2) Ատենադպիիր, (3) ՓոխԱտենապետ, (4) Փոխ Ատենադպիիր, (5) Գանձապահ, (6) Գոյքապահ, (7) Խորհրդական։

30Դ. 32. — Վարչութիւնը կ'ընտրուի տարեկերջի ընդհ. ժողովին մէջ, ուր կը կատարուի նաև հին Վարչութեան տարեկան հաշուեկտութիւնը։

30Դ. 33. — Միութիւնս ունի միայն մէկ ընտրութեան ձեւ՝ որ է, իւրաքանչիւր պաշտօնի համար ընտրեաներու եռապատիկ անուանում, և գաղանի քուէ արկութիւն։

30Դ. 34. — Ընտրութիւնները եւ որոշումները տեղի կ'ունենան ներկաներու քուէից մեծամասնութիւնով։ Զայն չի փոխանցուիր եւ նամակով քուէ չընդունուիր։

30Դ. 35. — Երբ Վարչութեան անդամներէն մէկն մինչեւ երեքը կը պակսին, ընդհ. ժողովը անոնց տեղը կ'ընտրէ նորերը։ Բայց Զորս անդամներ եթէ միանդամայն պակսին, ընդհ. ժողովի՝ անմիջապէս կ'ընտրէ նոր Վարչութիւն մը։

## ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ ԵՒ ՄԱՅՐ ԴԻՒԱՆ

30Դ. 36. — Ընդհ. անդամական ժողովը, Միութեան գերազոյն մարմինն է, որ կը գու-

մարուի առնուազն կը ք ամիսը անդամ մը : Ա-  
նիկա կ'ընտրէ Վարչութիւնը եւ կը նշանակէ  
Պատուակալ անդամները եւ կը վաւերացնէ  
պիտմէն, ներկաներուն մեծամասնութեան  
քուկովք :

30Դ. 37.— Առաջին ժողովը օրինաւոր կը նը-  
կասուի :

30Դ. 38.— Միութիւնս ունի Ընդհ. ժողովի  
Մայր Դիւան մը, որ կը բազկանայ մէկ Առե-  
նապեսէ եւ մէկ Առենապեսիրէ :

30Դ. 39.— Մայր Դիւանը կը հրաւիրէ ու  
կը վարէ տարեկան առնուազն Զորս անդամա-  
կան ժողովները :

30Դ. 40.— (ա) Վարչութեան դէմ գժղոհու-  
թեան կամ անվստահութեան պարագային, (բ)  
ինչպէս նաեւ բացառիկ պարագաներուն Վար-  
չութեան պահանջովը, եւ կամ (գ) Երբ տասը  
անդամներէ ստորագրուած պահանջագիր մը  
ներկայացուի Մայր Դիւանին, այս վերջինը կը  
հրաւիրէ եւ կը վարէ Ընդհ. ժողովի այս օրի-  
նակ նիստերն ալ :

30Դ. 41.— Մայր Դիւանի տարեշրջանը,  
ընտրութեան ձեւը եւ ժամանակը նոյնն է, ինչ-  
պէս կանոնադիրը կը տրամադրէ Վարչութեան  
համար :

30Դ. 42.— Վարչութեան անդամ մը չի կըր-  
նար նոյն տաեն անդամ ըլլալ նաեւ Մայր Դի-  
ւանին :

## ՊիհՏՃԵ

30Դ. 43.— Միութեանս պիտմէն կը կապ-  
մուի Երգահանդէսներէ, Եկեղեցւոյ Պահանքներէ,  
եւ ուրիշ աղբիւրներէ գոյացած հասոյթներով :

30Դ. 44.— Միութեանս սնտուկը եղած գու-  
մարը պէտք է գրամատուն մը գրուի Միու-  
թեանս անունով եւ Առենապես եւ Գանձա-  
պահէ ստորագրութեամբ :

30Դ. 45.— Վարչութիւնը իրաւասութիւն  
ունի Դրամատունէն առառաւելն Յիսուն (50)  
Տոլար միայն քաշմբու զանալան ծախքերու հա-  
մար : Աւելի գումար մը պահանջուելու պարա-  
գային պիտի գիմէ անդամական ժողովի հա-  
ւանութեանը :

30Դ. 46.— Ամէն տարեգլխին, Ընդհ. ժո-  
ղովը յետ քննութեան կը վաւերացնէ անցեալ  
տարուան Հաջուեկշոր եւ յաջորդ տարուան  
Պիտմէն :

## ՎԱՐԻՉԸ

30Դ. 47.— Միութեանս Դպրաց Վարիչը կը  
նշանակուի տեղւոյն Հայ Առաքելական Եկեղեց-  
ւոյ Հոգաբարձութեան կողմէ՝ Միութեանս  
Ընդհ. ժողովին հետ խորհրդակցութեամբ :

30Դ. 48.— Վարչութիւնը պարտաւոր է տեչ-  
զեկացնել գումարուելիք ժողովներուն օրն ու  
տեղը Տիար Վարիչին, որ ազատ է ներկայ  
ըլլալ եւ տալ իր հրահանդները ու թելադրու-  
թիւնները :

309. 49.—Դպրաց վարիչի պաշտօնն է՝  
երգի փորձերը, և կեղեցւոյ Դպրաց Դասը, և  
Երգահանդէսները վարել, որուն միջոցին ոչ ոք  
իրաւունք ունի անսաստելու՝ ինչ հանդաման-  
քով այ որ բլար:

Արեւիթեան էլե Հոգվելլաց Սուխեան

304. 50.—Միութեանս նախագահնէ տեղ-  
ւոյն Հոգեւոր Հովիւը, որ բարոյական կապ կը  
պահէ Միութեան և Հայ Առաք. Եկեղ. Հո-  
գարարձութեան միջեւ:

30¶· 51.—Միութեանս Վարչական մարմիններուու եւ Վարիչին միջեւ պատահելիք ունէ անհասկացողութեան պարագային, նախ կը դիմուի Նախագահ Հոգեւոր Հովիւին, այն աւ եթէ չի յաջողի կարգադրել, իսկդիրը կ'ենթարկուի Հոգաբարձութեան նկատագութեանը:

30ף. 52.—Միութիւնս կարելիութեան սահմանին ըէջ, ընդառաջ պիտի երթայ Հոգաբարձութեան ծախքովը, ըրջակայ թեմերու արարողութեանց Համար ըլլալիք առաջարկութեանց կամ հրաւէքըներուն:

• 30¶· 53.—Կանոնագրի ուևէ Յօդուած, բացի Նպատակն՝ բարեփոխելի է անդամներու երկու-երրորդգի հաւանութեամբը միայն:

80¶ 54.—Երբ Միութեան Անդամներուն  
թիւը 10-էն պակաս ըլլայ նախ տեղույն Հայ Ա-  
ստաքեյական Եկեղեցւոյ Հոգաբարձութիւնը ա-

պա Մ. Առաջնորդը նոր փորձ մը կ'ընեն զայն  
վերակազմելու եւ եթէ չի յաջողին այն ատեն  
Միութիւնը լուծուած կը համարուի, եւ Մի-  
ութեան պատկանող բոլոր շարժական եւ ան-  
շարժ գոյքերը եւ պատրաստ ու զանձուելիք  
դրամը կը յանձնուին տեղւոյն Հայ Առաքելա-  
կան Եկեղեցւոյ Հոգաբարձութեան:

Հաստատելով սոյն կանոնագրութիւնը Հայ Առաքելական Եկեղեցւոյ Դպրաց - Երաժշտասիրաց Միութեան համար, զայն ի գործադրութեան կը յանձնեն:

Առաջնորդ Ամերիկահայոց  
Դեհնաշխատ ԵՊՍ . ԴՈՒՐԵԱՆ

1932, Ցուցանկ 31

Whi bnpf



3846

ՀՀ Ազգային գրադարան



NL0030735

104

O M\$.

hukl

3727